Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N 931-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)

2010 թվականի հոկտեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 4-ը Ասիական զարգացման բանկի առաքելության այցի արդյունքում ստորագրված փոխըմբռնման հուշագրով համաձայնեցվել է "Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի" (այսուհետ՝ Ծրագրի) 2-րդ տրանշի վերջնական նախապատրաստման ժամկետը, այդ թվում, որպես Ծրագրի Կառավարման խորհրդի կողմից ճանապարհի ծրագծին հավանություն տալու վերջնաժամկետ է սահմանվել 2010 թվականի նոյեմբերի 8-ը: Սակայն, Ծրագրի Կառավարման խորհուրդը, ծրագծի երկարատև քննարկումների և վերանայումների արդյունքում, այն հավանության արժանացրեց միայն 2011 թվականի փետրվարի 9-ին N 23.6/[61679]-11 արձանագրության 4-րդ կետով:

Ծրագծին հավանություն տալն ուշացնելու արդյունքում կետանցվեց նաև ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի թիվ 931-Ն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետի "ա" պարբերությամբ սահմանված ժամկետը:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության կառավարության 24.09.2010թ. թիվ 1223-Ա որոշման համաձայն Էջիս Բիսիոմ Ինտերնեյշնլ կազմակերպության հետ կնքված պայմանագրով իրականացվող աշխատանքների արդյունքում՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի որոշ հատվածները միջազգային ընդունված ստանդարտներին համապատասխանեցնելու նպատակով վերանայվել է գույքի օտարման ծավալը և հստակեցվել են դրա տարածքային դիրքերը:

Օտարվող հողակտորների ցանկի վերջնական տարբերակի պատրաստումը զուգորդվում էր բազմաթիվ ճշտումների ծավալուն աշխատանքներ կատարելու անհրաժեշտությամբ: Այդ իսկ պատճառով խնդիր է առաջանում փոփոխություն կատարել նաև նաև ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի թիվ 931-Ն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետի "բ" պարբերությամբ սահմանված ժամկետը:

Ելնելով վերոգրյալից անհրաժեշտ է փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի թիվ 931-Ն որոշումում:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայումս, Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքներում հաշվի առնված չէ Ծրագրի Կառավարման խորհուրդի կողմից ծրագրի քննարկումների համար ծախսվող ժամանակը: Օրինակ՝ Ծրագրի Կառավարման խորհուրդի կողմից ծրագծի երկարատև քննարկումների և վերանայումների արդյունքում, այն հավանության արժանացավ միայն 2011 թվականի փետրվարի 9-ին N 23.6/[61679]-11 արձանագրության 4-րդ կետով հաստատված ծրագիծը:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Առաջարկվում է համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի թիվ 931-Ն որոշման հավելվածում:

2. Կարգավորման առարկան

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում օտարվող գույքի գործընթացի կարգավորումը:

3. Իրավական ակտի կիրարկման դեպքում ակնկալվող արդյունքը

Հայաստանի Հանրապետության "Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին" 2010 թվականի մայիսի 27-ի N 931-Ն որոշմամբ նախատեսված գործընթացների բնականոն իրականացումն է, ինչպես նաև գույքի օտարման հետևանքով ազդեցության ենթակա անձանց օրենքով սահմանված փոխհատուցման ապահովումը:

Մ. Վարդանյան